ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19-20-27
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ**
**ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ**

18 հունիսի 2020թ. ք. Երևան

Նախագահությամբ՝ Ռ. Սինոյանի
անդամներ՝ Հ. Ռշտունի
Բ. Ղալոյան
Վ. Բերակչյան
Տ. Իսրաելյան

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 12/06/20թ. «Արարատ-Արմենիա-2»-«ՈՒրարտու-2» (ԱԽ223) խաղին «Արարատ-Արմենիա-2» թիմի ֆուտբոլիստ Արամ Խամոյանի (N 18396) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար) /զեկուցող Հ. Ռշտունի/

2. 12/06/20թ. «Արարատ-Արմենիա-2»-«ՈՒրարտու-2» (ԱԽ223) խաղին «ՈՒրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Սիմոնյանի (N 20883) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար) /զեկուցող Հ. Ռշտունի/

3. 11/06/20թ. «Արարատ-Արմենիա»-«Արարատ» (ԲԽ105) խաղի մասին (Խաղի ընթացքում «Արարատ-Արմենիայի» գլխավոր տնօրեն Պողոս Գալստյանը դժգոհում էր մրցավարությունից: Առաջին խաղակեսի ընթացքում տրիբունայից մրցավա\րների հասցեին հնչեց մի քանի դիտողություն (առանց հայհոյանք)): /զեկուցող Հ. Ռշտունի/

4. 11/06/20թ. «Արարատ-Արմենիա»-«Արարատ» (ԲԽ105) խաղի մասին (Երկրորդ խաղակեսի սկզբում «Արարատ» ակումբի գործադիր տնօրեն Տիգրան Ղարաբաղցյանը VIP-օթյակից վիրավորանքներ (ոչ հայհոյանք) հնչեցրեց մրցավարների հասցեին: Խաղավերջում՝ մրցավարի կողմից «Արարատի» դարպասին 11-մետրանոց նշանակելուց հետո «Արարատ» ակումբի թարգմանիչ Վալերի Օգանեսյանի կողմից եղան հայհոյախառը վիրավորանքներ մրցավարների հասցեին: «Արարատ» թիմի մի քանի ֆուտբոլիստներ ևս հայհոյում էին մրցավարներին, մեղադրում կողմնակալության մեջ: «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Լուկման Արունան չորրորդ մրցավար Շահեն Աղայանի հասցեին հնչեցնում էր հայհոյանքներ և սպառնալիքներ (I hate you, I will find you wherever you are)՝ ես ատում եմ քեզ, կգտնեմ քեզ, որտեղ էլ լինես:) /զեկուցող Հ. Ռշտունի/

5. 16/06/20թ. «Ալաշկերտ»-«Շիրակ» (ԲԽ109) խաղին մասին (1. «Շիրակ» ակումբի պաշտոնյաները և ակումբի հյուրերը, որոնք տեղակայվել էին VIP գոտուց դեպի ձախ ընկած տրիբունայի վերջին հատվածում, գրեթե ողջ խաղի ընթացքում դիմակները չեն կրել սահմանված կարգով, առաջին խաղակեսում մեկ անգամ նրանց բանավոր զգուշացնելուց հետո մի որոշ ժամանակ կրեցին սահմանված կարգով, սակայն երկրորդ խաղակեսում նորից չէին կրում սահմանված կարգի համաձայն: 2. Նախախաղային ժողովին «Շիրակ» թիմի ներկայացուցիչը ասաց, որ իրենց հյուրերի ցուցակը կտրամադրի սահմանված ժամանակից մի փոքր ուշ, սակայն այն այդպես էլ չներկայացրեց:) /զեկուցող Հ. Ռշտունի/

6. 12/06/20թ. «Տորպեդո»-«Դիլիջան ՖԱ» (ԱԽ217) խաղի մասին (Ընդմիջման ժամանակ տեղի է ունեցել միջադեպ՝ ՀՖՖ տեսուչ Կամո Մախտեսյանի և «Դիլիջան» ակումբի տնօրեն Արտակ

Մելիքյանի միջև: Հայհոյանքներ հնչեցնելու համար Արտակ Մելիքյանը հեռացվել է մարզադաշտից պատվիրակի հրահանգով:) /զեկուցող Հ. Ռշտունի/

7. 12/06/20թ. «Արազած»-«Վեստ Արմենիա» (ԱԽ220) խաղի մասին (Դաշտի տեր ակումբը պատրաստել էր ոչ բավարար քանակի հավատարմագրեր: Մարզադաշտում կային անձինք, ովքեր հավատարմագրեր չէին կրում, բայց մարզադաշտում գտնվելու իրավունք ունեին:) /զեկուցող Հ. Ռշտունի/

8. 12/06/20թ. «Արարատ-2»-«Անի» (ԱԽ221) խաղի մասին (Խաղը սկսվել է 3 րոպե ուշացումով «Անի» թիմից պաշտոնյա չլինելու պատճառով: «Անի» թիմը խաղի արձանագրությունը ներկայացրել է մանկապատանեկան բլանկով:) /զեկուցող Հ. Ռշտունի/

9. 12/06/20թ. «Լոկոմոտիվ»-«Մասիս» (ԱԽ222) խաղի մասին («Մասիս» թիմը խախտել է ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները, ըստ որի առաջին խմբում խաղի արձանգրությունում պետք է լինի առնվազն 10 հայ ֆուտբոլիստ: «Մասիս» թիմի արձանագրությունում նշված էին 7 հայ ֆուտբոլիստներ: «Մասիս» թիմի արձանագրությունում նշված էր նաև մարզիչ Վլադիմիր Տրուֆանովը, որը սակայն ներկա չէր հանդիպմանը՝ երկրում չլինելու պատճառով: Մարզչի պարտականությունները կատարում էր արձանագրությունում որպես թարգմանիչ նշված Բոնդարենկո Օլեկսանդրը:) /զեկուցող Հ. Ռշտունի/

10. 12/06/20թ. «Փյունիկ-2»-«Շիրակ-2» (ԱԽ225) խաղի մասին (Հանդիպման 70-րդ րոպեին «Փյունիկ-2» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Ավետիսյանի և «Շիրակ-2» թիմի ֆուտբոլիստ Սերյոժա Ուռուշանյանի միջև տեղի ունեցած խաղային դրվագը վերածվեց երկու թիմերի միջև բախման, որից հետո երկու ֆուտբոլիստներն էլ զգուշացվեցին հանդիպման գլխավոր մրցավարի կողմից: Խաղի ավարտից հետո նույն ֆուտբոլիստների միջև թեթև հրմշտոց տեղի ունեցավ նաև հանդերձարանների հարակից տարածքում, սակայն ոստիկանության և մարզադաշտի անվտանգության աշխատակիցները կանխեցին անախորժ միջադեպը:) /զեկուցող Հ. Ռշտունի/

11. 16/06/20թ. «Արարատ»-«Լոռի ՖԱ» (ԲԽ110) խաղի մասին («Արարատ» թիմի 31 համարի ֆուտբոլիստի (Դավիթ Բաղդասարյան) մարզահագուստի ետնամասում բացակայում էր ազգանունը:) /զեկուցող Հ. Ռշտունի/

12. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարզարյանի 17/06/2020թ. ծառայողական գրության քննարկում, 15/06/20թ. «Մասիս»-«Արարատ-2» (ԱԽ230) խաղի մասին («Մասիս» թիմը խախտել է ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետը՝ չապահովելով Առաջին խմբի համար նախատեսված 10 ՀՀ քաղաքացիություն ունեցող ֆուտբոլիստների քանակը) /զեկուցող Հ. Ռշտունի/

13. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարզարյանի 17/06/2020թ. ծառայողական գրության քննարկում, 16/06/20թ. «Անի»-«Արազած» (ԱԽ231) խաղի մասին («Արազած» թիմի կազմում հանդես է եկել որակազրկված ֆուտբոլիստ՝ Մուրադ Ասատրյանը (10291) /զեկուցող Հ. Ռշտունի/

**1. 12/06/20թ. «Արարատ-Արմենիա-2»-«Ուրարտու-2» (ԱԽ223) խաղին «Արարատ-Արմենիա-2» թիմի ֆուտբոլիստ Արամ Խամոյանի (N 18396) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 12/06/20թ. «Արարատ-Արմենիա-2»-«ՌԻրարտու-2» (ԱԽ223) խաղին «Արարատ-Արմենիա-2» թիմի ֆուտբոլիստ Արամ Խամոյանի (N 18396) հեռացման (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 32-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Արամ Խամոյանին որակազրկել 1 խաղով, «Արարատ-Արմենիա Ֆուտբոլային Ակումբ» ԲԲԸ-ին տուգանել 30000 ՀՀ դրամ

**2. 12/06/20թ. «Արարատ-Արմենիա-2»-«ՌԻրարտու-2» (ԱԽ223) խաղին «ՌԻրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Սիմոնյանի (N 20883) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
2. 12/06/20թ. «Արարատ-Արմենիա-2»-«ՌԻրարտու-2» (ԱԽ223) խաղին «ՌԻրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Սիմոնյանի (N 20883) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 32-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «ՖԱ Ուրարտու» ՍՀԿ ակումբին տուգանել 25000 ՀՀ դրամ

**3. 11/06/20թ. «Արարատ-Արմենիա»-«Արարատ» (ԲԽ105) խաղի մասին (Խաղի ընթացքում «Արարատ-Արմենիայի» գլխավոր տնօրեն Պողոս Գալստյանը դժգոհում էր մրցավարությունից: Առաջին խաղակեսի ընթացքում տրիբունայից մրցավարների հասցեին հնչեց մի քանի դիտողություն (առանց հայհոյանք)):**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
3. 11/06/20թ. «Արարատ-Արմենիա»-«Արարատ» (ԲԽ105) խաղին (Մրցավարների գործողությունների վերաբերյալ դժգոհություն հայտնելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Արարատ-Արմենիա Ֆուտբոլային Ակումբ» ԲԲԸ-ին հայտարարել նկատողություն

**4. 11/06/20թ. «Արարատ-Արմենիա»-«Արարատ» (ԲԽ105) խաղի մասին (Երկրորդ խաղակեսի սկզբում «Արարատ» ակումբի գործադիր տնօրեն Տիգրան Ղարաբաղցյանը VIP-օթյակից վիրավորանքներ (ոչ հայհոյանք) հնչեցրեց մրցավարների հասցեին: Խաղավերջում՝ մրցավարի կողմից «Արարատի» դարպասին 11-մետրանոց նշանակելուց հետո «Արարատի» ակումբի թարգմանիչ Վալերի Օգանեսյանի կողմից եղան հայհոյախառը վիրավորանքներ մրցավարների հասցեին: «Արարատ» թիմի մի քանի ֆուտբոլիստներ ևս հայհոյում էին մրցավարներին, մեղադրում կողմնակալության մեջ: «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Լուկման Արունան չորրորդ մրցավար Շահեն Աղայանի հասցեին հնչեցնում էր հայհոյանքներ և սպառնալիքներ (I hate you, I will find you wherever you are)՝ես ատում եմ քեզ, կգտնեմ քեզ, որտեղ էլ լինես:)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
4.1. 11/06/20թ. «Արարատ-Արմենիա»-«Արարատ» (ԲԽ105) խաղին («Արարատ» ակումբի գործադիր տնօրեն Տիգրան Ղարաբաղցյանի կողմից վիրավորանքներ հնչեցնելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբի գործադիր տնօրեն Տիգրան Ղարաբաղցյանին հայտարարել նկատողություն

4.2. 11/06/20թ. «Արարատ-Արմենիա»-«Արարատ» (ԲԽ105) խաղին «Արարատ» թիմի թարգմանիչ Վալերի Օգանեսյանի (N 26608) (հայհոյախառը վիրավորանքներ մրցավարների հասցեին հնչեցնելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն՝ թարգմանիչ Վալերի Օգանեսյանին որակազրկել մինչև 29.06.2020թ., «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 150000 ՀՀ դրամ

4.3. 11/06/20թ. «Արարատ-Արմենիա»-«Արարատ» (ԲԽ105) խաղին («Արարատ» մի քանի ֆուտբոլիստների կողմից մրցավարներին հայհոյելու) համար, ՀՖՖ կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 150000 ՀՀ դրամ

4.4. 11/06/20թ. «Արարատ-Արմենիա»-«Արարատ» (ԲԽ105) խաղին «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Լուկման Արունայի (N 36521) (չորրորդ մրցավարի հասցեին հայհոյանքներ և սպառնալիքներ հնչեցնելու) համար, ՀՖՖ կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Լուկման Արունային որակազրկել մինչև 29.06.2020թ., «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 150000 ՀՀ դրամ

**5. 16/06/20թ. «Ալաշկերտ»-«Շիրակ» (ԲԽ109) խաղին մասին (1. «Շիրակ» ակումբի պաշտոնյաները և ակումբի հյուրերը, որոնք տեղակայվել էին VIP գոտուց դեպի ձախ ընկած տրիբունայի վերջին հատվածում, գրեթե ողջ խաղի ընթացքում դիմակները չեն կրել սահմանված կարգով, առաջին խաղակեսում մեկ անգամ նրանց բանավոր զգուշացնելուց հետո մի որոշ ժամանակ կրեցին սահմանված կարգով, սակայն երկրորդ խաղակեսում նորից չէին կրում սահմանված կարգի համաձայն: 2. Նախախաղային ժողովին «Շիրակ» թիմի ներկայացուցիչը ասաց, որ իրենց հյուրերի ցուցակը կտրամադրի սահմանված ժամանակից մի փոքր ուշ, սակայն այն այդպես էլ չներկայացրեց:)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
5. 16/06/20թ. «Ալաշկերտ»-«Շիրակ» (ԲԽ109) խաղին («Շիրակ» ակումբի պաշտոնյաների և ակումբի հյուրերի դիմակներ սահմանված կարգով չկրելու, հյուրերի ցուցակը չներկայացնելու) համար, ՀՖՖ կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին հայտարարել նկատողություն

**6. 12/06/20թ. «Տորպեդո»-«Դիլիջան ՖԱ» (ԱԽ217) խաղի մասին (Ընդմիջման ժամանակ տեղի է ունեցել միջադեպ՝ ՀՖՖ տեսուչ Կամո Մահտեսյանի և «Դիլիջան» ակումբի տնօրեն Արտակ Մելիքյանի միջև: Հայհոյանքներ հնչեցնելու համար Արտակ Մելիքյանը հեռացվել է մարզադաշտից պատվիրակի հրահանգով:)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
6.1. 12/06/20թ. «Տորպեդո»-«Դիլիջան ՖԱ» (ԱԽ217) խաղին («ԴՖԱ ՓԲԸ» ակումբի տնօրեն Արտակ Մելիքյանի կողմից հայհոյանքներ հնչեցնելու) համար, ՀՖՖ կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն՝ «ԴՖԱ ՓԲԸ» ակումբի» ակումբի տնօրեն Արտակ Մելիքյանին թույլ չտալ մասնակցել ՀՀ ֆուտբոլի Առաջին խմբի առաջնության խաղերին մինչև 2019/20 թթ. մրցաշրջանի ավարտը, ԴՖԱ ՓԲԸ-ին տուգանել 250000 ՀՀ դրամ

6.2. Միջնորդություն ներկայացնել ՀՖՖ մրցավարական կոմիտեին՝ ՀՖՖ տեսուչ Կամո Մահտեսյանի վարքագիծը քննարկելու և համապատասխան որոշում կայացնելու վերաբերյալ:

**7. 12/06/20թ. «Արագած»-«Վեստ Արմենիա» (ԱԽ220) խաղի մասին (Դաշտի տեր ակումբը պատրաստել էր ոչ բավարար քանակի հավատարմագրեր: Մարզադաշտում կային անձիք, ովքեր հավատարմագրեր չէին կրում, բայց մարզադաշտում գտնվելու իրավունք ունեին:)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

7. 12/06/20թ. «Արագած»-«Վեստ Արմենիա» (ԱԽ220) խաղին (Հավատարմագրման աշխատանքները ոչ պատշաճ կերպով կազմակերպելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Արագած» ֆուտբոլային ակումբին հայտարարել նկատողություն:

**8. 12/06/20թ. «Արարատ-2»-«Անի» (ԱԽ221) խաղի մասին (Խաղը սկսվել է 3 րոպե ուշացումով «Անի» թիմից պաշտոնյա չլինելու պատճառով: «Անի» թիմը խաղի արձանագրությունը ներկայացրել է մանկապատանեկան բլանկով:)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
8. 12/06/20թ. «Արարատ-2»-«Անի» (ԱԽ221) խաղին (խաղն ուշացումով սկսելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 29-րդ կետի համաձայն՝ «Անի» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամ

**9. 12/06/20թ. «Լոկոմոտիվ»-«Մասիս» (ԱԽ222) խաղի մասին («Մասիս» թիմը խախտել է ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները, ըստ որի առաջին խմբում խաղի արձանգրությունում պետք է լինի առնվազն 10 հայ ֆուտբոլիստ: «Մասիս» թիմի արձանագրությունում նշված էին 7 հայ ֆուտբոլիստներ: «Մասիս» թիմի արձանագրությունում նշված էր նաև մարզիչ Վլադիմիր Տրուֆանովը, որը սակայն ներկա չէր հանդիպմանը՝ երկրում չլինելու պատճառով: Մարզչի պարտականությունները կատարում էր արձանագրությունում որպես թարգմանիչ նշված Բոնդարենկո Օլեկսանդրը: )**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
9. 12/06/20թ. «Լոկոմոտիվ»-«Մասիս» (ԱԽ222) խաղին («Մասիս» թիմի կողմից ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները խախտելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Մասիս» ֆուտբոլային ակումբ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տուգանել 60000 ՀՀ դրամ

**10. 12/06/20թ. «Փյունիկ-2»-«Շիրակ-2» (ԱԽ225) խաղի մասին (Հանդիպման 70-րդ րոպեին «Փյունիկ-2» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Ավետիսյանի և «Շիրակ-2» թիմի ֆուտբոլիստ Սերյոժա Ուռուշանյանի միջև տեղի ունեցած խաղային դրվագը վերածվեց երկու թիմերի միջև բախման, որից հետո երկու ֆուտբոլիստներն էլ զգուշացվեցին հանդիպման գլխավոր մրցավարի կողմից: Խաղի ավարտից հետո նույն ֆուտբոլիստների միջև թեթև հրմշտոց տեղի ունեցավ նաև հանդերձարանների հարակից տարածքում, սակայն ոստիկանության և մարզադաշտի անվտանգության աշխատակիցները կանխեցին անախորժ միջադեպը:)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
10.1. 12/06/20թ. «Փյունիկ-2»-«Շիրակ-2» (ԱԽ225) խաղին (խաղի ժամանակահատվածում ֆուտբոլիստների ոչ մարզական պահվածքի) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 24-րդ կետի համաձայն՝ «Փյունիկ» ՖԱ ՀԿ-ին տուգանել 50000 ՀՀ դրամ

10.2. 12/06/20թ. «Փյունիկ-2»-«Շիրակ-2» (ԱԽ225) խաղին (խաղի ժամանակահատվածում ֆուտբոլիստների ոչ մարզական պահվածքի) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 24-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 ՀՀ դրամ

**11. 16/06/20թ. «Արարատ»-«Լոռի ՖԱ» (ԲԽ110) խաղի մասին (Արարատ թիմի 31 համարի**

**ֆուտբոլիստի (Դավիթ Բաղդասարյան) մարզահագուստի ետնամասում բացակայում էր ազգանունը:)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
11. 16/06/20թ. «Արարատ»-«Լոռի ՖԱ» (ԲԽ110) խաղին (մարզահագուստի ետնամասում ազգանվան բացակայության) համար, ՀՖՖ կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբին հայտարարել նկատողություն:

**12. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարզարյանի 17/06/2020թ. ծառայողական զրության քննարկում, 15/06/20թ. «Մասիս»-«Արարատ-2» (ԱԽ230) խաղի մասին («Մասիս» թիմը խախտել է ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետը՝ չապահովելով Առաջին խմբի համար նախատեսված 10 ՀՀ քաղաքացիություն ունեցող ֆուտբոլիստների քանակը)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
12. 15/06/20թ. «Մասիս»-«Արարատ-2» (ԱԽ230) խաղին («Մասիս» թիմի կողմից ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները խախտելու) համար, ՀՖՖ կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Մասիս» ֆուտբոլային ակումբ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տուգանել 80000 ՀՀ դրամ

**13. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարզարյանի 17/06/2020թ. ծառայողական զրության քննարկում, 16/06/20թ. «Անի»-«Արազած» (ԱԽ231) խաղի մասին («Արազած» թիմի կազմում հանդես է եկել որակազրկված ֆուտբոլիստ՝ Մուրադ Ասատրյանը (10291)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
13. 16/06/20թ. «Անի»-«Արազած» (ԱԽ231) խաղին («Արազած» թիմի կազմում որակազրկված ֆուտբոլիստ՝ Մուրադ Ասատրյանին (10291) խաղացնելու) համար, ՀՖՖ կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն՝ «Արազած» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, «Անի» թիմին գրանցել տեխնիկական հաղթանակ 3:0 հաշվով, «Արազած» ֆուտբոլային ակումբ ՀԿ-ին տուգանել 30000 ՀՀ դրամ

| | |
|---|---|
| ՆԱԽԱԳԱՀ | Ռ. ՍԻՆՈՅԱՆ |
| ՔԱՐՏՈՒՂԱՐ | Հ. ՌՇՏՈՒՆԻ |

Հիշեցում՝
ՀՖՖ կարգապահական և Էթիկայի կանոնակարգի հոդված 12-ի համաձայն՝
Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.
Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: